

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՄՁ ԶԱԿ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ  
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԾՁԲ-2018/7-2**

ք. Երևան

« 07 » 04 2018թ.

«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը ի դեմս տնօրեն Լ. Մնացականյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Ա/Ձ Ռոբերտ Մարտիրոսյանը, ի դեմս տնօրեն Ռ. Մարտիրոսյանի, որը գործում է Ա/Ձ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

#### **4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **310,000 (Երեք հարյուր տաս հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

#### **5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## **6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

/ստորագրություն/

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

| Հ/Հ | SU-1, SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քայլուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները | Չափաբաժին 7                                    | Չափի միավորը | ԳՄԱ ծածկագիրը | Քանակը | Ծառայության մատուցման նախընտրելի ժամկետը   | Հասցե  |
|-----|--------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------|--------------|---------------|--------|--------------------------------------------|--------|
|     |                                                                                                                          | ՎԱԶ 21214 մեքենայի տեխնիկական սպասարկում/ Վայք |              |               |        |                                            |        |
|     | SU-1 ներառվող ծառայությունների անվանումը                                                                                 |                                                | դրամ         | 50111130      | 1      | Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ. | ք.Վայք |
| 1   | Բռնկման համակարգի ստուգում                                                                                               | 0                                              |              |               |        |                                            |        |
| 2   | Սառեցման համակարգի ստուգում                                                                                              | 0                                              |              |               |        |                                            |        |
| 3   | Յուղման համակարգի ստուգում                                                                                               | 0                                              |              |               |        |                                            |        |
| 4   | Արտացման համակարգի ստուգում                                                                                              | 0                                              |              |               |        |                                            |        |
| 5   | Կցորդման համակարգի ստուգում                                                                                              | 0                                              |              |               |        |                                            |        |
| 6   | ՓՏ-ի աշխատանքի ստուգում                                                                                                  | 0                                              |              |               |        |                                            |        |
| 7   | ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում                                                                                                 | 0                                              |              |               |        |                                            |        |
| 8   | Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում                                                                                  | 0                                              |              |               |        |                                            |        |
| 9   | Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում                                                                                          | 0                                              |              |               |        |                                            |        |
| 10  | Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում                                                                             | 0                                              |              |               |        |                                            |        |
| 11  | Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում                                                                               | 0                                              |              |               |        |                                            |        |
| 12  | Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում                                                                                 | 0                                              |              |               |        |                                            |        |
| 13  | ABS համակարգի ստուգում                                                                                                   | 0                                              |              |               |        |                                            |        |
| 14  | Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում                                                                                  | 0                                              |              |               |        |                                            |        |
| 15  | Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում                                                                                  | 0                                              |              |               |        |                                            |        |
| 16  | Թափքի վիճակի ստուգում                                                                                                    | 0                                              |              |               |        |                                            |        |
| 17  | Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում                                                                 | 0                                              |              |               |        |                                            |        |
|     | SU-2 ներառվող ծառայությունների անվանումը                                                                                 |                                                |              |               |        |                                            |        |
| 18  | Շարժիչի հանում տեղադրում                                                                                                 | 15000                                          |              |               |        |                                            |        |
| 19  | Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում                                                                                     | 20000                                          |              |               |        |                                            |        |
| 20  | Նույնը կոնդիցիոների դեպքում                                                                                              | 20000                                          |              |               |        |                                            |        |
| 21  | Նույնը ԱՓՏ-ի դեպքում                                                                                                     | 20000                                          |              |               |        |                                            |        |
| 22  | Շարժիչի վերականգնում                                                                                                     | 65000                                          |              |               |        |                                            |        |
| 23  | Նույնը DOHC դեպքում                                                                                                      | 65000                                          |              |               |        |                                            |        |
| 24  | Նույնը V6-ի դեպքում                                                                                                      | 65000                                          |              |               |        |                                            |        |

|    |                                               |       |  |  |  |  |
|----|-----------------------------------------------|-------|--|--|--|--|
| 25 | Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում            | 5000  |  |  |  |  |
| 26 | Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում          | 10000 |  |  |  |  |
| 27 | Նույնը աջի համար (V6)                         | 10000 |  |  |  |  |
| 28 | Նույնը ձախի համար (V6)                        | 10000 |  |  |  |  |
| 29 | Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում       | 10000 |  |  |  |  |
| 30 | Նույնը աջի համար (V6)                         | 15000 |  |  |  |  |
| 31 | Նույնը ձախի համար (V6)                        | 15000 |  |  |  |  |
| 32 | Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում         | 5000  |  |  |  |  |
| 33 | Շարժիչի գլխիկի վերանորոգում                   | 15000 |  |  |  |  |
| 34 | Փականի խցուկի փոխարինում                      | 15000 |  |  |  |  |
| 35 | Նույնը V6-ի դեպքում                           | 20000 |  |  |  |  |
| 36 | Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում              | 15000 |  |  |  |  |
| 37 | Նույնը V6-ի ձախի դեպքում                      | 15000 |  |  |  |  |
| 38 | Նույնը V6-ի աջի դեպքում                       | 15000 |  |  |  |  |
| 39 | Նույնը DOHC դեպքում                           | 15000 |  |  |  |  |
| 40 | Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում               | 10000 |  |  |  |  |
| 41 | Հրիչների փոխարինում SOHC                      | 5000  |  |  |  |  |
| 42 | Նույնը DOHC դեպքում                           | 7000  |  |  |  |  |
| 43 | Ատամնավոր փոկի փոխարինում                     | 5000  |  |  |  |  |
| 44 | Նույնը DOHC դեպքում                           | 6000  |  |  |  |  |
| 45 | Նույնը V6-ի դեպքում                           | 6000  |  |  |  |  |
| 46 | Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում         | 6000  |  |  |  |  |
| 47 | Նույնը կոնդիցիոների դեպքում                   | 7000  |  |  |  |  |
| 48 | Նույնը DOHC դեպքում                           | 7000  |  |  |  |  |
| 49 | Նույնը կոնդիցիոների դեպքում                   | 7000  |  |  |  |  |
| 50 | Նույնը V6-ի դեպքում                           | 7000  |  |  |  |  |
| 51 | Նույնը կոնդիցիոների դեպքում                   | 7000  |  |  |  |  |
| 52 | Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում         | 7000  |  |  |  |  |
| 53 | Նույնը UFS-ի դեպքում                          | 7000  |  |  |  |  |
| 54 | Մխոցային օդակների փոխարինում                  | 15000 |  |  |  |  |
| 55 | Նույնը DOHC դեպքում                           | 15000 |  |  |  |  |
| 56 | Նույնը V6-ի դեպքում                           | 15000 |  |  |  |  |
| 57 | Թափանիվի հանում և տեղադրում                   | 5000  |  |  |  |  |
|    | <b>2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ</b> |       |  |  |  |  |
| 58 | Յուղի և յուղի գտիչի փոխարինում                | 500   |  |  |  |  |
| 59 | Յուղի պոմպի փոխարինում                        | 5000  |  |  |  |  |
| 60 | Նույնը DOHC դեպքում                           | 6000  |  |  |  |  |
| 61 | Նույնը V6-ի դեպքում                           | 6000  |  |  |  |  |
| 62 | Ղեկավարման բլոկի վերանորոգում                 | 15000 |  |  |  |  |
| 63 | Բռնկման կարգավորում                           | 5000  |  |  |  |  |

|     |                                                |       |
|-----|------------------------------------------------|-------|
| 64  | CO կարգավորում                                 | 3000  |
| 65  | Խարնարակի հանում և տեղադրում                   | 3000  |
| 66  | Խարնարակի վերանորոգում                         | 5000  |
| 67  | Օդի զտիչի փոխարինում                           | 1500  |
| 68  | Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում             | 10000 |
| 69  | Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում                | 10000 |
| 70  | Բենզամղիչի փոխարինում                          | 3000  |
| 71  | Վառելիքի զտիչի փոխարինում                      | 3000  |
| 72  | Վառելիքի բաքի հանում և տեղադրում               | 5000  |
| 73  | Տրամյորի հանում և տեղադրում                    | 3000  |
| 74  | Տրամյորի վերանորոգում                          | 6000  |
|     | <b>3. Սառեցման և արտաժման համակարգ</b>         |       |
| 75  | Հովհարի փոկի հանում և տեղադրում                | 2000  |
| 76  | Հովհարի հանում և տեղադրում                     | 5000  |
| 77  | Ռադիատորի հանում և տեղադրում                   | 3000  |
| 78  | Նույնը կոնդիցիոների դեպքում                    | 5000  |
| 79  | Նույնը ԱՓՏ-ի դեպքում                           | 5000  |
| 80  | Ռադիատորի վերանորոգում                         | 6000  |
| 81  | Թերմոստատի փոխարինում                          | 5000  |
| 82  | Ջրի պոմպի փոխարինում                           | 8000  |
| 83  | Նույնը DOHC և V-6 դեպքում                      | 8000  |
| 84  | Նույնը կոնդիցիոների դեպքում                    | 8000  |
| 85  | Ջրի պոմպի վերանորոգում                         | 5000  |
| 86  | Նույնը DOHC դեպքում                            | 6000  |
| 87  | Նույնը կոնդիցիոների դեպքում                    | 6000  |
| 88  | Ընդարձակող բաքի փոխարինում                     | 4000  |
| 89  | Խլարարի հանում և տեղադրում                     | 3000  |
| 90  | Նույնը DOHC դեպքում                            | 5000  |
| 91  | Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում           | 3000  |
|     | <b>4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ</b>                   |       |
| 92  | Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում        | 3000  |
| 93  | Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում              | 5000  |
| 94  | Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում | 10000 |
| 95  | Կցորդման ոտնակի հանում և տեղադրում             | 3000  |
| 96  | Կցորդման ճոպանի հանում և տեղադրում             | 3000  |
| 97  | ՓՏ-ի հանում և տեղադրում                        | 10000 |
| 98  | ՓՏ-ի վերանորոգում                              | 15000 |
| 99  | ՓՏ-ի առանցքակալի փոխարինում                    | 3000  |
| 100 | ՓՏ-ի պատյանի հանում և                          | 3000  |

|     |                                                       |       |
|-----|-------------------------------------------------------|-------|
|     | տեղադրում                                             |       |
| 101 | Վազքաչափի շարժաբերի փոխարինում                        | 3000  |
| 102 | ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում                   | 5000  |
| 103 | ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում                      | 5000  |
| 104 | Նույնը V6-ի համար                                     | 6000  |
| 105 | ԱՓՏ-ի հանում և տեղադրում                              | 15000 |
| 106 | Նույնը V6-ի համար                                     | 20000 |
| 107 | ԱՓՏ-ի վերանորոգում                                    | 25000 |
| 108 | Նույնը V6-ի համար                                     | 25000 |
| 109 | ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում                          | 1500  |
|     | <b>5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ</b>               |       |
| 110 | Բաշխիչ տուփի հանում և տեղադրում                       | 10000 |
| 111 | Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով        | 15000 |
| 112 | Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում                        | 5000  |
| 113 | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում                  | 5000  |
| 114 | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգումով  | 7000  |
| 115 | Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում          | 5000  |
| 116 | Կարդանային լիսեռի միջանկյալ կախոցի հանում և տեղադրում | 5000  |
|     | <b>6. Առջևի և հետևի կամրջակներ</b>                    |       |
| 117 | Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում           | 10000 |
| 118 | Առջևի կամ հետևի կամրջակի լիակատար քանդում և հավաքում  | 25000 |
| 119 | Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի քանդում և հավաքում   | 15000 |
| 120 | Առջևի կամ հետևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում | 5000  |
| 121 | Կիսաստնու առանցքակալի փոխարինում                      | 3000  |
|     | <b>7. Կախոց</b>                                       |       |
| 122 | Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում              | 20000 |
| 123 | Տրավերսի հանում և տեղադրում                           | 15000 |
| 124 | Չախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում                | 3000  |
| 125 | Անվակունդի առանցքակալի փոխարինում                     | 5000  |
| 126 | Նույնը հետին տանող ա/մ-երի համար                      | 5000  |
| 127 | Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում               | 2000  |
| 128 | Նույնը հետին տանող ա/մ-երի համար                      | 2000  |
| 129 | Չախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում              | 2000  |

|     |                                               |      |  |  |  |  |
|-----|-----------------------------------------------|------|--|--|--|--|
| 130 | Ձախ կամ աջ հողակապի առանցքակալների փոխարինում | 5000 |  |  |  |  |
| 131 | Ցնցամեղմիչի թասակի փոխարինում                 | 2000 |  |  |  |  |
| 132 | Զսպանակի հանում և տեղադրում                   | 1500 |  |  |  |  |
| 133 | Զսպակի հանում և տեղադրում                     | 2000 |  |  |  |  |
| 134 | Զսպակի վռանների փոխարինում                    | 3000 |  |  |  |  |
| 135 | Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում          | 3000 |  |  |  |  |
| 136 | Ներքևի լծակի վռանների տեղադրում               | 3000 |  |  |  |  |
| 137 | Ներքևի լծակի վռանների փոխարինում              | 3000 |  |  |  |  |
| 138 | Առջևի աջ կամ ձախ ծգանների հանում և տեղադրում  | 2000 |  |  |  |  |
| 139 | Միջին ծգանի հանում և տեղադրում                | 5000 |  |  |  |  |
| 140 | Ճոճանակային լծակի հանում և տեղադրում          | 3000 |  |  |  |  |
| 141 | Վերևի լծակի հանում և տեղադրում                | 3000 |  |  |  |  |
| 142 | Վերևի լծակի վռանների փոխարինում               | 2000 |  |  |  |  |
| 143 | Գնդե հողակապերի փոխարինում                    | 3000 |  |  |  |  |
| 144 | Ծայրականների հանում և տեղադրում               | 3000 |  |  |  |  |
| 145 | Առջևի կայունարարի հանում և տեղադրում          | 5000 |  |  |  |  |
| 146 | Առջևի կայունարարի վռանների փոխարինում         | 1000 |  |  |  |  |
| 147 | Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում   | 2000 |  |  |  |  |
| 148 | Հետևի զսպանակի փոխարինում                     | 3000 |  |  |  |  |
| 149 | Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում          | 3000 |  |  |  |  |
| 150 | Հետևի ծգածողի հանում և տեղադրում              | 2000 |  |  |  |  |
| 151 | Հետևի երկաթածողի հանում և տեղադրում           | 3000 |  |  |  |  |
| 152 | Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում    | 2000 |  |  |  |  |
| 153 | Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում | 3000 |  |  |  |  |
| 154 | Անկյունագծային լծակի վռանների փոխարինում      | 3000 |  |  |  |  |
| 155 | Անվաբացքի կարգավորում                         | 6000 |  |  |  |  |
| 156 | Զոդման աշխատանքներ 1 քառ.սմ համար             | 500  |  |  |  |  |
|     | <b>8. Ղեկային մեխանիզմ</b>                    |      |  |  |  |  |
| 157 | Ղեկային կալունի հանում և տեղադրում            | 3000 |  |  |  |  |
| 158 | Նույնը V6-ի համար                             | 5000 |  |  |  |  |
| 159 | Ղեկային կալունի վերանորոգում                  | 5000 |  |  |  |  |
| 160 | ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում    | 5000 |  |  |  |  |

|     |                                            |       |  |  |  |  |
|-----|--------------------------------------------|-------|--|--|--|--|
| 161 | ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում         | 6000  |  |  |  |  |
| 162 | Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում   | 3000  |  |  |  |  |
| 163 | Նույնը DOHC դեպքում                        | 3000  |  |  |  |  |
| 164 | Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում    | 5000  |  |  |  |  |
| 165 | Նույնը DOHC դեպքում                        | 6000  |  |  |  |  |
| 166 | Հիդրոուժեղարարի փոխրակի հանում և տեղադրում | 1000  |  |  |  |  |
| 167 | Նույնը DOHC դեպքում                        | 2000  |  |  |  |  |
| 168 | Նույնը կոնդիցիոների դեպքում                | 2000  |  |  |  |  |
| 169 | ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում                | 2000  |  |  |  |  |
| 170 | ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում                      | 3000  |  |  |  |  |
|     | <b>9. Արգելակային համակարգ</b>             |       |  |  |  |  |
| 171 | Գլխ. գլանի հանում և տեղադրում              | 3000  |  |  |  |  |
| 172 | Գլխ. գլանի վերանորոգում                    | 6000  |  |  |  |  |
| 173 | Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում | 3000  |  |  |  |  |
| 174 | Բանվ. գլանի հանում և տեղադրում             | 2000  |  |  |  |  |
| 175 | Բանվ. գլանի վերանորոգում                   | 2000  |  |  |  |  |
| 176 | Արգելակային համակարգի օդահանում            | 1000  |  |  |  |  |
| 177 | Առջևի սուպպորտի հանում և տեղադրում         | 2000  |  |  |  |  |
| 178 | Հետևի սուպպորտի հանում և տեղադրում         | 2000  |  |  |  |  |
| 179 | Առջևի սուպպորտի վերանորոգում               | 3000  |  |  |  |  |
| 180 | Հետևի սուպպորտի վերանորոգում               | 3000  |  |  |  |  |
| 181 | Արգելակային փոխարինում                     | 3000  |  |  |  |  |
| 182 | Առջևի արգելակային կոճղակների փոխարինում    | 5000  |  |  |  |  |
| 183 | Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում   | 5000  |  |  |  |  |
| 184 | Հետևի կոճղակների փոխարինում                | 3000  |  |  |  |  |
| 185 | Առջևի արգելակային սկավառակի փոխարինում     | 5000  |  |  |  |  |
| 186 | Հետևի արգելակային սկավառակի փոխարինում     | 5000  |  |  |  |  |
| 187 | Արգելակային սեղմակի հանում և տեղադրում     | 3000  |  |  |  |  |
| 188 | ABS-ի հանում և տեղադրում                   | 5000  |  |  |  |  |
| 189 | ABS-ի վերանորոգում                         | 5000  |  |  |  |  |
| 190 | Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում   | 2000  |  |  |  |  |
| 191 | Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում      | 2000  |  |  |  |  |
|     | <b>10. Էլեկտրասարքավորում</b>              |       |  |  |  |  |
| 192 | Էլեկտրասարքավորման վերանորոգում            | 10000 |  |  |  |  |
| 193 | Չափիչ սարքերի հանում և տեղադրում           | 3000  |  |  |  |  |

|     |                                                           |       |  |  |  |  |
|-----|-----------------------------------------------------------|-------|--|--|--|--|
| 194 | Գեներատորի հանում և տեղադրում                             | 5000  |  |  |  |  |
| 195 | Նույնը V6-ի դեպքում                                       | 6000  |  |  |  |  |
| 196 | Նույնը հիդրոուժեղարարի դեպքում                            | 6000  |  |  |  |  |
| 197 | Գեներատորի վերանորոգում                                   | 6000  |  |  |  |  |
| 198 | Մեկնարկիչի հանում և տեղադրում                             | 5000  |  |  |  |  |
| 199 | Մեկնարկիչի վերանորոգում                                   | 7000  |  |  |  |  |
| 200 | Առջևի լապտերի հանում և տեղադրում                          | 2000  |  |  |  |  |
| 201 | Հետևի լապտերի հանում և տեղադրում                          | 3000  |  |  |  |  |
| 202 | Բռնկման կողպեքի հանում և տեղադրում                        | 3000  |  |  |  |  |
| 203 | Վազքաչափի հանում և տեղադրում                              | 5000  |  |  |  |  |
| 204 | Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում                       | 3000  |  |  |  |  |
| 205 | Սարքերի պանելի հանում և տեղադրում                         | 5000  |  |  |  |  |
| 206 | Արագաչափի հանում և տեղադրում                              | 5000  |  |  |  |  |
